80 Ալ մոտ ըլլամ, ո՛վ Տեր, ալ մոտ՝ Քեզի,

1. Ալ մոտ ըլլամ, ո՛վ Տեր, ալ մոտ՝ Քեզի,
Թեև ճամփաս ըլլա դառն, ցավալի,
Միշտ աղոթեմ պիտի՝
Ալ մոտ ըլլամ Քեզի, (2) ալ մոտ՝ Քեզի:

2. Թեև թափառական գիշեր ատեն
Մութ տեղ քարի մը վրա իմ գլուխս դնեմ,
Երազներուս մեջ, Տեր,
Ալ մոտ ըլլամ Քեզի, (2) ալ մոտ՝ Քեզի:

3. Սանդուխ մը հոն տեսնեմ՝ Քովեդ իջած,
Անթիվ սուրբ հրեշտակներ՝ վրան ալ կայնած,
Որ աչք ընեն ինծի,
Ալ մոտ ըլլամ Քեզի, (2) ալ մոտ՝ Քեզի:

4. Քընից ելած՝ ես Քեզ պիտի գովեմ
Ու դառն վշտես Բեթել պիտի շինեմ,
Որ տառապանքներովս
Ալ մոտ ըլլամ Քեզի, (2) ալ մոտ Քեզի:

5. Երբ որ ուրախ թևով ես վեր թռչիմ,
Աստղեն ու արևեն երբ որ անցնիմ,
Հոգիս երգե պիտի,
Ալ մոտ ըլլամ Քեզի, (2) ալ մոտ՝ Քեզի: